ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 158-Ա **«12» փետրվարի 2024 թ.**

ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏԱՄՈՒՏ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 1036-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը և հաշվի առնելով 2005 թվականի մայիսի 19-ին Բերգենի կոմյունիկեով Բոլոնիայի հռչակագրին միանալու արդյունքում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների շրջանակը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել Բոլոնիայի գործընթացի հետամուտ և աշխատանքային խմբերի՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցիչների կազմը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Հետամուտ և աշխատանքային խմբերի ներկայացուցիչներին ապահովել՝

1) Հայաստանի Հանրապետության պատշաճ ներկայացուցչությունը Բոլոնիայի գործընթացի շրջանակում կազմակերպվող համաժողովներին, հանդիպումներին և այլ միջոցառումներին,

2) ակտիվ և պատշաճ մասնակցություն խմբերի աշխատանքներին:

3. Հետամուտ խմբի ներկայացուցիչներին՝

1) եռամսյա պարբերականությամբ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացնել քննարկվող հարցերի, ոլորտում նախատեսվող միտումների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև տրամադրել մասնագիտական խորհրդատվություն և առաջարկություններ ոլորտի հետագա զարգացման հնարավորությունների վերաբերյալ՝ ըստ խմբերի աշխատանքային ուղղվածության,

2) ձեռնարկել միջոցներ բարձրագույն կրթության ոլորտում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության որդեգրած քաղաքականության սկզբունքներին համահունչ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի լավագույն փորձի համապատասխանեցման, ինչպես նաև եվրոպական գործընկերներին Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ոլորտի ձեռքբերումների հաջողված փորձի ներկայացման ուղղությամբ:

4. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին՝

1) ապահովել ներկայացուցիչների մասնակցությունը ծրագրով նախատեսված խմբերի աշխատանքներին և սույն հրամանի 3-րդ կետով նախատեսված միջոցառումների համակարգում,

2) սահմանված կարգով ապահովել համապատասխան ֆինանսավորում:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի օգոստոսի 13-ի N 1036-Ա հրամանը:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**
/ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ/

Հավելված N 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի
2024 թվականի փետրվարի 12-ի

N 158-Ա հրամանի

ԿԱԶՄ

ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏԱՄՈՒՏ ԽՄԲԻ

Հ/հ	Անուն ազգանուն	Զբաղեցրած պաշտոն
1.	Մարիանա Սարգսյան	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ
2.	Էլինա Ասրիյան	Երևանի պետական համալսարանի ուսումնական հարցերի գծով պրոռեկտոր

Հավելված N 2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի
2024 թվականի փետրվարի 12-ի
N 158-Ա հրամանի

ԿԱԶՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Հ/հ	Անուն ազգանուն	Զբաղեցրած պաշտոն
1.	Գայանե Հարությունյան	«Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի տնօրեն - Լիսաբոնի ճանաչման կոնվենցիային ազգային օրենսդրության և ընթացակարգերի համապասխանության խումբ (***«Լիսաբոնի ճանաչման կոնվենցիա»)***
2.	Վարդուհի Գյուլազյան	Որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավար - Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակի ապահովման չափանիշներին և ուղենիշներին համապատասխան որակի ապահովման խումբ (***«Որակի ապահովում»)***
3.	Անի Մկրտչյան	Որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) որակի ներքին ապահովման պատասխանատու - Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակին համադրելի եռաստիճան համակարգի խումբ (***«Որակավորումների շրջանակ»)***
4.	Լիլիթ Սարգսյան	Երևանի պետական համալսարանի եվրոպական լեզուների հաղորդակցության ֆակուլտետի անգլերեն թիվ 2 ամբիոնի դոցենտ - Բոլոնիայի գործընթացի հետ կապված աշխատանքներն իրականացնող «Ուսումնառություն և դասավանդում» խումբ